

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԱՆԴԻՆՅԱՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ¹⁾

Գլուխ Գ.

Հնդկաստանի կտակների բազմամեայ կնճիռը լուծելու և Նախիջևանի բարեգործական հաստատութիւններն իւրեանց իրաւունքին տէր անելու համար, հարկաւոր էր մի սրտացաւ մարդ, որ չբաւականանար միայն պաշտօնական և մասնաւոր գրագրութեամբ, ինչպէս երջանկայիշատակ Շփրեմ կաթողիկոսը, որ մի մասնաւոր գրագրութիւն էր սկսել Կալկաթացի Բարադամեանի և Տէր-Յովսէփ քահանայի հետ, կամ Ներսէս Աշտարակեցին, որ մի երկար պաշտօնական գրագրութիւն էր բաց արել Վորոնցովի ձեռքով Ռուսաց և Անգլիացւոց պաշտօնեաների հետ, և, վերջապէս, Ս. Էջմիածնի սիւնհոգոսը, որ գրագրութիւն էր անում Թադէոս արքեպիսկոպոսի և Գաբրիէլ Այվազեանի հետ և այլ վերջինները միմեանց հետ։ Դոքա բոլորեքեան էլ, անկասկած, սրտացաւ և նախանձախնդիր էին ազգի օգուտներին և հասարակաց բարիքներին, բայց նոյն ժամանակ դոքա պաշտօնական անձինք էին, կապուած իւրեանց տեղի ու պաշտօնի հետ, և ունէին, բացի այդ գործից, այլ ևս շատ ու շատ ոչ պակաս կարեւոր ազգային գործեր, ուստի և չէին կարող բոլորամասն նուիրուել դորան միայն, և, պէտք է խոստովանել, չունէին էլ այն հմտութիւնը, այն գիտութիւնը, որոնք հարկաւոր էին դորա համար, չունէին և պատրաստականութիւն լանձն առնելու կրելու դորա համար ամեն մի նեղութիւն, վիշտ ու դառնութիւն։

¹⁾ Տե՛ս Լուսնայ 1904թ. № 2.

Այդ գործի համար պէտք էր մի մասնաւոր մարդ, ազգի մէջ անուն ու հեղինակութիւն ունեցող, գիտուն, հասկացող, աչքաբաց, ճարպիկ, արտասահմանեան կեանքին ծանօթ, ֆրանսերէն ու անգլիերէն իմացող, տրամադիր ամեն բան տեղնուտեղը քրքրելու, ուսումնասիրելու, տրամադիր հասարակաց բարիքների համար մինչև իսկ անձամբ Հնդաստան ուղևորուելու և իւր տեղում ամեն բան վերջացնելու։ Այդպիսի մի մարդ ամբողջ 60 տարուայ ընթացքում չէր գտնուել Նախիջեւանի հասարակութեան մէջ և երկար ժամանակ չէր էլ գտնուիլ, եթէ բաղդի բերմամբ 1860 թուին հանգէս չգար Նալբանդեանցը և գործի գլուխ չառնէր ու կտակների գորդեան հանգոյցը լուծելու գործին էլ այնպիսի տաքութեամբ, եռանդով ու հաստատակամութեամբ չկալէր, ինչպէս ամեն մի ազգային, ժողովրդական և հասարակաց գործի։

Իսկապէս ինչ դժուարութիւններ կային, որոնց այդ ժամանակները պէտք էր յաղթել Հնդկաստանի կտակների խնդիրը վերջնականապէս լուծելու համար։ Դժուարութիւններ կային և դոցա թիւը քիչ չէր։ Պէտք էր, նախ, կտակների ամբողջ պատմութիւնն իւր բոլոր մանրամասնութեամբ երևան հանել կտակներ անելու ժամանակներից մինչև վաթսնական թուականները և իմանալ, թէ ինչ շրջաններից են անցկացել նոքա, ինչ փոփոխութիւններ են կրել, ո՞րք են եղել կտակակատարներն այդ բոլոր ժամանակամիջոցում, ինչպէս են պահել նոքա գումարները, կալուածքները. ինչպէս են շահեցրել, ո՞րքան են եղել առաջ և ո՞րքան են ներկայում, այսինքն վաթսնական թուականներին. երկրորդ, պէտք էր երեսփոխանութեան թուղթ հանել և հաստատել ու վաւերացնել ալ նորան Նախիջեւանի ժողովրդի և քաղաքագլխի ստորագրութեամբ, Հայկական Մագիստրատի կնքով, վեհափառ Կաթողիկոսի վկայութեամբ. երրորդ, պէտք էր ստանալ Կովկասի գլխաւոր իշխանութեան հաճութիւնը և նորա ձեռքով արտաքին գործոց նախարարի հաստատութիւնը և անգլիական կառավարութեան վաւերացումը. չորրորդ, պէտք էր անձամբ գնալ Հնդկաստան և երկար ժամա-

նակ մնալ այնտեղ, կրելով այդ ճանապարհորդութեան հետ կապուած մեծամեծ նեղութիւնները և՛ ենթարկուելով ամեն տեսակ պատահարների. հինգերորդ, պէտք էր ծանօթանալ անգլիական դատաւորութեան գործին, դատ վարել և դատարանով պահանջել և առնել գումարները, որովհետեւ գործն այնքան հնացել էր, այնքան խճճուել ու բարդուել, որ կտակաւորներինց ոչ ոք, անկասկած, չէր ցանկանալ իւր յօժար կամքով յանձնել գումարները. վերջապէս, վեցերորդ, պէտք էր ապացոյց տալ այն բարեգործական հաստատութիւնների գոյութիւնը Նախիջևանում, որոնց համար արուած էին կտակները, և այլն և այլն, չենք խօսում արդէն այն բանի մասին, որ անհրաժեշտ էր Նախիջևանցւոց պէս հասարակաց գործերին անտարբեր հասարակութեան միտքը պատրաստել, շարժուելու, գործ անելու հակումն առաջ բերել նրանց մէջ, անդադար գրելով, դրդելով, քարոզելով, խօսելով, համոզելով, չենք խօսում և բազմութիւ խօսք ու զրօյցի, թշնամութիւնների, կուսակցական կռիւների, հակառակութիւնների մասին, որոնք այդ ժամանակները գոյութիւն ունէին Նախիջևանում և արգելք էին լինում գործի յառաջադիմութեան և որոնց անհրաժեշտ էր լաղթել:

Նալբանդեանցն այդ բոլոր դժուարութիւնները կարողանում է հեռացնել ու յաջողութեամբ գլուխ հանել կարևոր գործը. նա այդ դէպքում նմանում է մի ճարտար ղեկավարի, որ յաջողում է իրեն յանձնուած նաւը հմտութեամբ անցկացնել ծովային ամեն տեսակ խոչ ու խուժից, ծովաժայռերից, ալիքներից ու փոթորիկներից ու խաղաղութեամբ նաւահանգիստը հասցնել նորան: Նաւը, այո՛, ազատոււմ է, բայց նաւապետը: Ե՛հ, ի՞նչ փոյթ Նախիջևանի անտարբեր ու կռուասէր հասարակութեան, որ նա այդ գործի մէջ իսպառ քայքայւում է իւր առողջութիւնը ու ստուարացնում իւր հակառակորդների թիւը, որոնց ատելութեանը շուտով նա զոհ պիտի երթար: Դժուար, շատ դժուար է հարցասէր ու մտածող մարդուն թերթել այն հաստափոր գործը, որ մինչև ցայսօր դեռ պահոււմ է Նախիջևանի քաղաքային խորհրդարանի դի-

ւանում ³⁾։ Մարդ ամաչում, կարմրում է, զայրանում, երբ նորա, այդ գործի, համարեա՞ մասն մի թերթում պատահում է վատ ակնարկութիւնների, կարգում է յիշոցներ ու մինչև իսկ հասարակաց փողերի թագուցանող, կամ, լաւ է ասել, գող, յափշտակող խօսքերը. ուղղուած հասարակութեան բարերարի հասցէին... Եւ այդ բոլորն այն ժամանակ, երբ այդ գող հռչակուած բարերարը հեռու հիւսիսում արգելանքի ստուար պատերի մէջ իւր վերջին օրերն էր անցկացնում...

Յայտնի է, որ Նալբանդեանցը 1860 թուին տպեց Հիւսիսափայլում Մասեհի կտակի պատճէնները ու յորդոր կարգաց իւր համաքաղաքացիներին զարթնել խորքնից ու մի կարգադրութիւն անել կտակների մասին, որովհետև ժամանակն, ինչպէս նա կարծում էր, այլևս չէր համբերում ու գործն իսպառ ձեռքից գնալու վերայ էր։ Յետոյ նա Պետերբուրգից, որտեղ նա նոր միայն արեւելեան լեզուագիտական կանդիդատի քննութիւն էր տուել ⁴⁾, եկաւ Նախիջևան ու իւր բարեկամ-

³⁾ Այդ հաստատիր գործը յայտնի է Նախիջևանում «Կատակազլի գործ» անունով։ Այդ մասին տես մեր «Մի էջ Մ. Նալբանդեանցի կենսագրութիւնից» խորագրով յօդուածը, որ տրււած է 1900 թուի «Տարազ»ի համարներում, էջ 74, գլուխ Գ։

⁴⁾ Նալբանդեանցն երկու անգամ քննութիւն է տուել Պետերբուրգի համալսարանում։ Առաջին անգամ 1853 թուին՝ Լազարեան ճեմարանում հայոց լեզուն աւանդելու իրաւունքը ձեռք բերելու, երկրորդ անգամ 60 թուին՝ արեւելեան լեզուագիտութեան կանդիդատ ճանաչուելու համար։ Առաջին քննութեան վկայականը, որ, ինչպէս ասացինք մեր առաջին ծանօթութեան մէջ, պահպանուած է նորա թղթերի մէջ մինչև ցայսօր, կրում է համալսարանի ընդտոր նշանաւոր Պետր Պլետնեովի ստորագրութիւնը։ Դորա մէջ ասուած է, թէ համալսարանի քննիչ յանձնաժողովը քննութեան ենթարկելով մեշչանների հասարակութիւնից արձակուած Միքայէլ Նալբանդեանցին, Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հագաբար ձուր սեպտեմբերի 17 ին արած առաջարկութեան համաձայն, ճանաչել է նրան իրաւատէր Լազարեան ճեմարանում հայոց

ների, կուսակիցների ու մասնաւորապէս Հայրապետեանցի օգնութեամբ Հայկական Մագիստրատում մի ժողով կազմել տուեց՝ կտակների մասին խորհրդակցելու ու մի վերջնական վճիռ կայացնելու համար։ Յայտնի է նոյնպէս, որ այդ ժողովում ընտրուեց լիազօր երեսփոխան Նախիջևանի կողմից ինքը Նալբանդեանցը և պարտականութիւն դրուեց նորա վերայ անձամբ երթալու Հնդկաստան՝ հրետակների գործն իր տնդում կարգադրելու, վերջացնելու։ Ժողովն եղաւ բազմամարդ ու աղմկալից, որովհետեւ ներկայ եղան երկու կուսակցութիւնն էլ՝ Հայրապետեանք և Խալիբեանք, Աղմուկն առաջ եկաւ գլխաւորապէս այն հանգամանքից, որ ընտրուողի անձնաւորութիւնն, իբրեւ Հայրապետական կուսակցութեան պատկանած մարդու, հաճելի չէր խալիբականներին։ Դոքա, խալիբականները, աշխատում էին ամեն տեսակ խափանել այդ ընտրութիւնը, պատճառ բերելով, թէ ընտրութիւնը նախապէս պիտի վաւերացնէ առաջնորդը և թէ երեսփոխութեան թուղթն առանց առաջնորդի ստորագրութեան վաւերական չէ։ Հայրապետեանք էլ դորա, խալիբականների այդ առարկութիւնների դէմ, պատասխանում էին, թէ առաջնորդն այդ գործում մատ չպէտք է ունենայ, թէ նորա ստորագրութիւնն ու վաւերացումը բոլորովին աւելորդ է, և այլն և այլն։

Ո՞ր կուսակցութեան կողմն էր ճշմարտութիւնը, և Նալբանդեանցը, որ խալիբականների այդ խորամանկ ու նենգ առարկութիւնների դէմ ամենաջերմ խօսողն ու վիճաբանողն էր, մի՞թէ չ'գիտէր օրէնքի պահանջը և կտակի տրամադրութիւնը, որ այնքան զայրանում էր ու մինչև իսկ վիրաւորական խօսքեր էր ուղղում առաջնորդի հասցէին։ Ո՛չ, նա ամեն բան լաւ գիտէր ու չէր էլ ուզում անիրաւացի գտնուել դէպի իւր հակառակորդները։ Նա, օրինակի համար, գիտէր, որ կրտակը պահանջում էր, որ երեսփոխանութեան թղթի վերայ լինի և առաջնորդի ստորագրութիւնը, բայց

լեզուի ուսուցիչ լինելու „въ уваженіе оказанныхъ хорошихъ повнаній“:

գորա հետ միասին նա լաւ հասկանում էր և այն, որ այդտեղ խալիբականների կողմից օրինականութեան խնդիր իսկապէս չկայ, այլ միայն նենգութիւն ու խարդախութիւն: Այվազեան Գաբրիէլ վարդապետն երբէք չէր համաձայնիլ իւր ստորագրութիւնը դնել այն թղթի տակ, որով ընտրուած էր երեսփոխան Նալբանդեանցը, որ նորա ոխերիմ թշնամին էր: Բացի սորանից, Այվազեանն իսկապէս առաջնորդ էլ չէր, այլ միայն «առաջնորդութեան տեղապահ», ասել է թէ թեմի մի ժամանակաւոր կառավարիչ, կարգուած կաթողիկոս չեղած ժամանակ ու դեռ չ'ստացած նորընտիր կաթողիկոսի հաճութիւնը, ուրեմն և լիազօր առաջնորդի բոլոր իրաւունքներն ու արտօնութիւնները չ'վայելող մի մարդ:

Ընտրողութիւնը կատարուելուց ու երեսփոխանութեան թուղթը ժողովրդից և քաղաքագլխից ստորագրուելուց յետոյ ու քաղաքի կնքով կնքուելուց յետոյ, Նալբանդեանցը վճռում է նախապէս ուղևորուել Ս. Էջմիածին, որ թուղթն ու ընտրութիւնը վաւերացնել տայ կաթողիկոսի ստորագրութեամբ, որով և նա մի կողմից փակած կը լինէր հակառակորդների բերանը և կատարած կտակի տրամադրութիւնը, միւս կողմից էլ վեհափառի օրհնութիւնն ու ձեռնադրութիւնն առած ու ստացած կլինէր ձեռնարկած գործի համար: Ընտրողութեան ժողովը լինում է 1860 թուի Յուլիսի 15-ին, իսկ նա ճանապարհ է դուրս գալիս մօտաւորապէս օգոստոսի 13—15-ին: Այդ ամբողջ ամիսը նա անց է կացնում պատրաստութեան մէջ, որովհետեւ երկար ու դժուար ճանապարհորդութիւն պիտի կատարէր, երկար ժամանակ պիտի բացակայէր հայրենիքից եւ բնականապէս ամեն տեսակ պատրաստութիւն պիտի տեսնէր, ամեն բան պիտի նախատեսնէր: Նա պատրաստում է բոլոր թղթերը, ստանում է ճանապարհածախսի համար հարկաւոր փողը ու կազմում է իւր ճանապարհորդութեան նախնական մարշրուտը—Ս. Էջմիածին, Թիֆլիս, Փոթի, Պոլիս, Եգիպտոս, Ադէն, Բօմբայ, Կոլոմբօ, Մադրաս և Կալկաթա: Դոյն իսկ ժամանակները Նախիջևանում գոյուլթիւն ունէր և մի լանձնաժողով,

որին յանձնուած էր քաղաքի և շրջակայ գիւղերի կողմից եկեղեցական դրամների հաշիւների քննութեան՝ յայտնի գործը: Ահա այդ յանձնաժողովի անդամները Մարգար Հայրապետեանը, Դանիէլ Թորոսեանը, Սաղաթէլ Կայալեանը, Պետրոս Դանիէլեանը և Յակովբ Խլիշեանը դէպքից օգտուելով, իւրեանց կողմից ևս ընտրում են Նալբանդեանցին երեսփոխան և յանձնում են նորան կաթողիկոսի առաջ պարզելու եկեղեցական դրամների հաշուի խնդիրը, քննել տալու ամբողջ գործը, ճշմարտութիւնը վերականգնելու ու դրամները Խալիբից պահանջելու:

Օգոստոսի 13-ին նա գրաբար լեզուով գրած մի առանձին. «Ձեռնագիր» տալով քաղաքապետին Հայրապետեանցին, ստանում է նորանից կտակներին վերաբերեալ և Մագիստրատի դիւանում պահուած պաշտօնական թղթերը և, ինչպէս ասացինք, հէնց դոյն թուին, կամ մի քանի օր յետոյ ճանապարհ է ընկնում դէպի Ս. Եջմիածին, Նա իր հետ տանում է հետեւեալ թղթերը, որոնց վերայ իբրեւ հաստատուն դրկումենտների նա պիտի հիմնուէր, եթէ հարկաւոր լինէր դատ վարել և դատարանով պահանջել կտակուած գումարներն ու կայուածքները. —

Ա. վաւերական պատճէն եզրակացութեան ազգային պաշտօնական ժողովի, գումարելոյ ի 15 նախընթաց յուլիսի, վկայեալ Սրգոյ գլխոյ և դրոշմամբ կրնջոյ Նախիջևանայ.

Բ. Պատճէն կտակի Մասեհ Բաբաջանի

Գ. Պատճէն կտակի Եղիա Յակոբեանի.

Դ. Պատճէն նամակի Ելիազ Մինասեանի, որ ըզկտակակատարութենէ քեռ իւրոյ Կատարինեայ Խօջամալ.

Ե. Պատճէն նամակի Տէր-Յարութիւնի Տմառնեան, որ զկտակակատարութենէ Սարգիս Տատուլեան.

Ձ. Պատճէն հաշուոյ եկամտից և ծախուց տան Բաբաջանեանի, մինչ ց 1824.

Ե. Պատճէն անստորագիր նամակի, գրելոյ ի Կ. Պոլսոյ.

Ը. Պատճէն նամակի Պողոսի Որդանանեան ի մասին հրիտակացն.

Թ. Պատճէն նամակի Տէր Յովսէփայ Ստեփանեան.

Ժ. Պատճէն նամակի Գէորգայ Փանոսեան Բարա-
ղամեան.

ԺԱ. Թարգմանութիւն ի ռուս լեզու միոյ կտակի
Բարաղանեանի և Թարգմանութիւն ի Ֆրանսիական լե-
զու այսր կտակի: ⁵⁾

Սեպտեմբերի 6-ին Նալբանդեանցը ժամանում է
Ս. Էջմիածին և միւս օրը ներկայանալով կաթողիկոսին,
մատուցանում է նորան մինչև այդ ժամանակ
վարած եկեղեցական գումարների ամբողջ գործը և դո-
րա հետ միասին մի խոնարհադէմ յայտարարութիւն»,
որի մէջ նա յայտնելով իւր եկեղեցական գումարների
հաշիւները քննելու համար երեսփոխան ընտրուելը և
այդ նպատակով Ս. Էջմիածին ժամանելը, խնդրում է
նորին վեհափառութիւնից, նախ, կարգաւ մատուցած
գործը, որի մէջ, ինչպէս հայելու մէջ, պարզ կերպով
երևում է աստիճանաւոր խալիբեանի ձեռքն անիրաւա-
բար անցած գումարների պատմութիւնը և Գաբրիէլ
վարդապետ Ալվազովսկու ազգի իրաւունքն «անտեսե-
լու» հանգամանքները. երկրորդ մի քննական տտեան
կազմել կամ իւր ներկայութեամբ ու նախագահու-
թեամբ և կամ մի ուրիշի և քննել ու երևան հանել
ճշմարտութիւնը: Ինքը պատրաստ է ներկայ գտնուել
այդ բարձրագոյն ատեանի նիստերին, եթէ կբարեհա-
ճի նորին վեհափառութիւնը, և իբրև լիազօր երեսփո-
խան, կամ «որպէս բերանու պատկեր պատգամաւորաց»
թէ բերանացի և թէ գրաւոր անհրաժեշտ ու հարկա-
ւոր ծանօթութիւններն ու վկայութիւնները տալ և
առհասարակ ամեն բանում գործակից լինել, միայն որ
քննութիւնը պիտի լինի մանրակրկիտ ու մանրազնին,
որպէս զի Նախիջևանի ազգայինների կորած իրաւունք-
ները վերջապէս, գտնուեն:

Երջանկայիշատակ Մատթէոս կաթողիկոսը սիրով

⁵⁾ Այդ Ձեռնագրի բնագիրը, որ կրում է «երեսփոխան
Միքայէլ Նալբանդեանց, կանդիդատ արևելեան լեզուագիտու-
թեան Կայսերական Համալսարանի Ս. Պ. Բուրգայ» ստորա-
գրութիւնը, պահւում է հանգուցեալի թղթերի մէջ:

ընդունում է Նալբանդեանցին, կարդում է «յայտարարութիւնը» և առաջարկում է նորան մի առ ժամանակ մնալ Մայր-Աթոռում ու համբերել, մինչև որ ինքը կարողանայ կարգաւ գործը, ծանօթանալ բոլոր հանգամանքներին և մի որոշակի կարգադրութիւն անել: Հանգուցեալ վեհափառը շատ անբաւական լինելով Այվազեան վարդապետից, որ առանց իւր հաճութեան շարունակում էր առաջնորդութեան տեղապահի պաշտօնը վարել Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմում, անբաւական լինելով և աստիճանաւոր Յարութիւն աղա Խալիբեանից, որ զլանում էր իւր Նախիջևանի բոլոր եկեղեցիների ընդհանուր երէցփոխան եղած ժամանակամիջոցի եկեղեցական փողերի հաշիւը ներկայացնել ժողովրդին, ինքն էլ համակրում էր Նալբանդեանցին և ցանկանում էր օր առաջ քննել այդ գործը, երևան հանել ճշմարտութիւնը և դորանով վերջ դնել Նախիջևանի երկարատե խռովութիւններին. նա մինչև անգամ Յուլիսի 9-ին մի կոնգակ էր ուղարկել Նախիջևան քննիչ յանձնաժողովին, պատուիրելով, որ նոքա մի երեսփոխան ընտրեն և ուղարկեն Ս. Էջմիածին՝ վերջնական քննութիւնը կատարելու, վերջացնելու:

Այդ պատճառով էլ ահա կաթողիկոսը շատ չի ուշացնում գործը. նա շուտով դորանից լսեալ մի ժողով է կազմում սիւնհոդոսի անդամ հոգևորականներից, հրաւիրում է ներկայ գտնուել ժողովին այդ ժամանակուայ պրոկուրորի պաշտօնակատար Ս. Թաղիանոսեանցին և իրան Նալբանդեանցին, ինքը նախագահ է նստում և անյապաղ ձեռնարկում գործի քննութեան: Ժողովում պաշտպան են կանգնում Խալիբեանին և Այվազեանին Ղուկաս և Մակար արքեպիսկոպոսները, և այդ թերևս իւրեանց անձն անպատուութիւնից ազատ պահելու համար, որովհետև հէնց այդ սրբազաններն էին եղել, որ դորանից առաջ ընդունելով Այվազեանի խարդախած հաշտութեան թուղթը, խաբուել էին նորանից և սիւնհոդոսի կողմից պաշտօնապէս շնորհակալութիւն էին յայտնել վարդապետին նորա կատարած և գլուխ բերած հաշտութեան համար:

Երբոր Նալբանդեանցը մի առ մի հերքում է սըր-

բազանների յօգուտ Այվադեանի ու Խալիբեանի մէջ բերած փաստերն ու առարկութիւնները, նոքա Թաղիանոսեանցի հետ ներկայացնում են ժողովին այն հաշտութեան թուղթը, որ Նախիջևանցիք 41 մարդու ստորագրութեամբ տուել էին Այվադեանին: Նալբանդեանցը դուրս դէմ պատասխանում է, թէ այդ թուղթը զօրութիւն չունի, նախ, որովհետեւ այդ 41 մարդը հասարակութիւնից ընտրուած չեն եղել և լիազօրութիւն չեն ունեցել վերջացնելու գործը: Երկրորդ, Այվադեանն ինքն է ժողով հրաւիրել այդ մարդկանց, ինքն է կազմել ու գրել այդ թուղթը և բռնադատել ստորագրելու տակը, և առաջինը ստորագրել են Խալիբեանք: Երրորդ, թղթի բովանդակութիւնն այնպէս է, որ ցոյց է տալիս, թէ ստորագրողները փողերի հաշիւը չեն տեսել, չեն ստացել, այլ միայն յօժար են եղել առանց դատի վերջացնելու գործն Այվադեանի երաշխաւորութեամբ, որ յոյս է տուել նոցա, թէ ինքը բոլոր գումարն աւելիքով կստանայ Խալիբեանից, իսկ թուղթը սիւնհոգոսին ուղարկելու ժամանակ գրել է, թէ բոլորեքեան յօժարակամ վերջացրին գործը և ինքը ժողովականների ներկայութեամբ ստացաւ բոլոր հաշիւը Խալիբեանից, և, չորրորդ, ժողովականները, կարծես, մի ներքին ազդեցութեամբ զգալով խարդախութիւնը, աւելացրել են իւրեանց ստորագրութեան առաջ, թէ յօժար են հիմնաւոր հաշտութեան, և այդ «հիմնաւոր» բառը, որ այս դէպքում մեծ խորհուրդ ունի, Այվադեանի սիւնհոգոսին ուղարկած թղթում չի երևում:

Վեհափառն այս թեր ու դէմ վիճաբանութիւնները լսելուց յետոյ, առաջարկում է ուղարկել Նախիջևան սիւնհոգոսի հայրերից մէկին՝ գործը վերստին քննելու, գործակից ունենալով նախկին թեմակալ առաջնորդ Մատթէոս արքեպիսկոպոսին, որովհետեւ, ասում էր վեհափառը, նա քաջ տեղեակ է գործին: Բոլորեքեան համաձայնում են, բացի Ղուկաս սրբազանից, որ պնդում է, թէ վճիռ կայացնելուց առաջ, պէտք է մէկ էլ կարդալ և ուսումնասիրել գործը և յետոյ արդէն նորից ժողով կազմել և մի որոշ վճիռ արձակել: Սորա վերայ ժողովը լուծուում է և վերջնական վճա-

Հատուծիւնը յետաձգուում է, մինչև որ անդամները կարողանան նարից կարգալ և հիմնաւորապէս ուսումնասիրել ամբողջ գործը:

Սորանից երկու օր յետոյ Մակար սրբազանը կանչում է իւր մօտ Նալբանդեանցին և խնդրում է թարգմանել բոլոր գործը: Թէև այդ սիւնհոգոսի թարգմանի պարտականութիւնն էր, բայց Նալբանդեանցը չի մերժում. նա երկու օրուայ ընթացքում վերջացնում է բոլոր գործի թարգմանութիւնը և մատուցանում է սիւնհոգոսին, որպէս զի գործն այդ պատճառով յետ չընկնի և իւր մնալը Ս. Եղմիածնում չերկարի: Մի քանի օրից յետոյ կայանում է երկրորդ ժողովը դարձեալ կաթողիկոսի նախագահութեամբ, որի մէջ յիշեալ երկու սրբազանը կրկնում են իւրեանց նախկին առաջարկութիւնը, թէ պէտք է նախապէս բացատրութիւն պահանջել Այվազեանից, իսկ վեհափառը և Եղիազար արքեպիսկոպոսը պնդում են առաջին ժողովում կտայցած վճռի վերալ, թէ պէտք է քննիչ ուղարկել Նախիջևան և նորան տալ գործակից Մատթէոս արքեպիսկոպոս Վեհապետեանին: Այդ երկրորդ ժողովն էլ վերջանում է առանց մի որոշակի եզրակացութեան գալու, և գործը մնում է սիւնհոգոսի պաշտօնական վճռին, որի օր ըստ օրէ յետաձգուելու պատճառով և Նալբանդեանցը մնում է Մայր Աթոռում մի ամիս ժամանակով:

Հոկտեմբերի 8-ին, սիւնհոգոսը գրում է իւր հրամանն եկեղեցական դրամների հաշուի մասին, որի մէջ երևում է մի կցկտուր վճռահատութիւն, Նալբանդեանցի կարծիքով, ոչ սրժանի սիւնհոգոսի իրաւունքներին ու արժանաւորութեան. փոխանակ դատ բանալու ազգի վնասապարտ Այվազեանի և Խալիբեանի դէմ, նա, ընդհակառակը, պաշտպան է հանդիսանում նոցա և անտեղի խնդիրներ է յարուցանում, որով և մի կողմից ոտքի տակ է տալիս ճշմարտութիւնը, միւս կողմից էլ տէրութեան օրէնքը: Եւ զարմանալին այն է, որ պրոկուրորի պաշտօնակատար Թադիանոսեանցն էլ հաւանութիւն է տալիս այդ վճռին և իւր ստորագրութեամբ վաւերացնում այն օրագրութիւնը, որի հիման

վրայ գրուել էր հրամանը, թէ և նա իբրև տէրութեան պաշտօնեայ պիտի նախ և առաջ հսկէր, որ օրէնքն անպայման պահպանուած լինէր և կանոնաւոր քննութեամբ երևան հանուած յանցանքը պատժուէր։ Պէտք է նկատել, որ երկրորդ ժողովում Նալբանդեանցը մատուցել էր կաթուղիկոսին մի թուղթ 8 յօդուածից բաղկացած, որ նա հրամայել էր Սիւնհոգոսի անդամ Սարգիս վարդապետ Տէր Գասպարեանցին բարձրաձայն կարգալ ժողովականների առաջ, որի դէմ և ոչ ոք չէր կարողացել մի որևէ առարկութիւն անել։ Ահա այդ հիման վերայ էլ վեհափառը կոնգակով հրամայել էր սիւնհոգոսին հաշիւ պահանջել Այվազեանից։ Սակայն սիւնհոգոսը թէ և այդ բոլորը մտցրել էր արձանագրութեան մէջ, բայց անուշադիր էր թողել և հրատարակել իւր վերոյիշեալ հրամանը։

Նալբանդեանցը չափազանց զարմանում և բարկանում է սիւնհոգոսի այդ պարականոն գործողութիւնների, պրոկուրորի պաշտօնակատարի թուլութեան և Մակար ու Ղուկաս սրբազանների պաշտպանութեան վերայ։ Նա սիւնհոգոսի հրովարտակի մի օրինակն ուղարկելով Նախիջևան իրան երեսփոխան ընտրող քննիչ յանձնաժողովին, Հոկտեմբերի 10-ին գրում է նոցա, թէ ինքն այդ նուագ այլ ևս ոչինչ չի կարող անել, ուստի և թող իրան ազատ համարեն իւր պաշտօնից և ինքեանք խոհեմութեամբ շարունակեն գործը և ստանան դումարները, որով կարելի կլինի եկեղեցի չեղած տեղը գիւղերում եկեղեցիներ շինել և մի ազգային դպրոց հաստատել, շատ մասով գերազանց, քան թէ ուրիշների բացածը, այսինքն Խալիբեան դպրոցը, որի մէջ ազգային ոգին իբրև թէ բռնաբարուում էր դէպի օտարութիւն։ «Որովհետև, ասում է նա, տէրութեան օրէնքը բնաւ չի ներգործում Սինօդում, և լուրջկաբար չէ կարելի խօսել գլխաւոր անդամների հետ, որոնց ձեռքին գտնուում է Սինօդի երասանակը, և որովհետև պրոկուրորի պաշտօնակատարը լուում է ամեն գէպքում, չկատարելով իւր պարտականութիւնը, այդ պատճառով էլ, ի նկատի առնելով նամանաւանդ վերոյիշեալ երկու անդամի պաշտպանութեան ոգին դէ-

պի ազգի ու եկեղեցու վնասապարտները, այս անգամ ես ոչինչ չկարողացայ անել»⁶⁾։ Եթէ ազգը մի ուրիշ աւելի մեծ ու կարեւոր պարտականութիւն դրած չլինէր նորա վերայ—կալկաթայի հրետակների գործը, նա պիտի բողբէր փոխարքային և խնդրէր քննութիւն բանալ սիւնհոդոսի ապօրինի գործողութիւնների վերայ։ Բայց աւելի ևս մնալ Ս. Էջմիածնում նա չէր կարող, որովհետեւ աշունքը վերայ էր հասել և մօտենում էր ձմեռը, այն ինչ նա պէտք է դեռ 700 վերստ ճանապարհ կտրէր ցամաքով և անցնէր լեռների վերայով, որ հազիւ թէ կարողանար կատարել 10 օրուայ մէջ. նա պիտի շուտով հասնէր Թիֆլիս և այնտեղից էլ անցնէր Փոթի, որ նաւ մտնէր Հնդկաստան ուղևորուելու համար։

Գլուխ Դ.

Նայբանդեանցը մնալով Ս. Էջմիածնում մի ամբողջ ամիս և այդ բոլոր ժամանակը զբաղուելով Ալվազեանի և Խալիբեանի եկեղեցական հաշիւների գործով, նոյն ժամանակ չի մոռանում և իւր Մայր-Աթոռը ժա-

⁶⁾ Այդ տողերը մենք թարգմանել ենք հանգուցեալի այն գրաբար ընդարձակ նամակից, որ նա գրել է Ս. Էջմիածնից Նախիջևան իրան ընտրողներին, հաշիւ տալով նոցա եկեղեցական գումարների վերաբերմամբ Մայր-Աթոռում իւր կատարածների մասին։ Ոչ թէ այդ նամակը, այլ և բոլոր չատ թէքի պաշտօնական բնաւորութիւն կրող թղթերն իւր Նախիջևանից դուրս գալուց մինչև վերադարձը նա գրել է գրաբար։ Այդ հանգամանքը մենք համարում ենք մի շատ զարմանալի երևոյթ և բնորոշ բան հանգուցեալի կեանքում։ Այն մարդը, որ իւր գրական գործունէութեան ամենամեծ մասը նուիրել է աշխարհաբառի կարևոր դատը պաշտպանելու խնդրին, յանկարծ գրում է գրաբառ մի շարք պաշտօնական գրագրութիւններ, որոնք ուղղուած են այնպիսի մարդկանց, որոնք չգիտէին և չէին էլ կարողանալ իմանալ գրաբառ լեզուն, ինչով և ինչպէս պէտք է մեկնել այդ հանգամանքը. խօսքի և կեանքի ու գործադրութեան հակասութիւն չ'պէտք է տեսնել արդեօք դրա մէջ։

մանելու գլխաւոր նպատակը— հրետակների գործը։ Նա մանրամասնաբար զեկուցումն է անում կաթողիկոսին և խորհրդակցում է նորա հետ սկսածը շարունակելու և գործին լաւագոյն ընթացք տալու մասին։ Վեհափառը հաւանում է, օրհնում է նորա ձեռնարկութիւնը և իւր կնքով ու ստորագրութեամբ վաւերացնում է երեսփոխանութեան թուղթը։ Բացի սորանից, նա մի առանձին խնդիրքով, որի ռուսերէն բնագիրն ինքը Նալբանդեանցն է պատրաստում, գիմում է Կովկասի այն ժամանակուայ կառավարչապետ իշխան Բարեատինսկուն և միջնորդում, որ նորին պալծառափալութիւնը հաճի ընդունել երեսփոխանութեան թուղթը, վաւերացնէ և ընթացք տալ գործին, ինչպէս ինքը պատշաճ ու արժան կհամարէ։ Թուղթը թէև իբրև խնդրագիր գրուում է համառօտ, բայց շատ ամփոփ, այնպէս որ նորա մէջ լինում է և՛ խնդիրք, և՛ միջնորդութիւն, և՛ կտակների հակիրճ պատմութիւնը, և՛, վերջապէս, անարկութիւն կտակների ստացուելուց և տէրութեան համար առաջ գալիք օգուտների մասին։ Նալբանդեանցի և Վեհափառի կարծիքով, հրետակների գործի յաջողութիւնը շահաւոր պիտի լինէր և Ռուսաստանի համար, որովհետև այնքան մեծաքանակ գումարներ մի օտար տէրութիւնից պիտի փոխադրուէին Ռուսաստան, սեփականութիւն դառնային Ռուսաց հպատակների և ծախսուէին Ռուսաստանի սահմաններում ¹⁾։

Ս. Էջմիածնում գործը վերջացնելուց յետոյ, Նալբանդեանցը ճանապարհ է ընկնում գէպի Թիֆլիս և մնում է այնտեղ մինչև նոյեմբերի մէկը։ Այդ միջոցում նա յաճախ գնում-գալիս է փոխարքայի դիւանատունը, աշխատելով իմանալ կաթողիկոսի թղթի հետեւանքը և փոխարքայի եզրակացութիւնը։ Յայտնուում է, որ փոխարքան հաճութեամբ ընդունել է հայրապե-

¹⁾ Կաթողիկոսի իշխան Բարեատինսկուն ուղարկած թղթի օրինակը, լաւ է ասել, սեւագրութիւնը, գրուած Նալբանդեանցի ձեռքով ռուսերէն և հայերէն գրաբար, գտնուում է նորա թղթերի մէջ։

տի թուղթը և հրամայել է իւր դիպլոմատիքական դիւանին թարգմանել երեսփոխանական թուղթը Ֆրանսերէն և հաստատել այն գրով ու արքունի կնքով: Նոյեմբերի մէկին թուղթը հաստատոււմ է պատշաճաւոր և վաւերական վկայութեամբ և գրոււմ է դիւանի մատենի մէջ ընդ համարաւ 1302: Բացի սորանից, փոխարքան ի յարգանս միջնորդութեան վեհափառ կաթողիկոսին ամենայն Հայոց 1303 համար թղթով գրոււմ է Պետերբուրգ արտաքին գործոց նախարար Պ. Գորչակովին և յայտնելով նորան գործի հանգամանքները, խնդրում է այդ մասին իմաց տալ անգլիական տէրութեան: Այս բոլորն իմանալուց և ամեն բան կարգադրելուց յետոյ, Նալբանդեանցն այլ ևս չի ուշանում թիֆլիսում. նա փողերի հաշուառութեան գործն ուղարկոււմ է Նախիջևան. ինքն էլ Վի տուռնջեան, ընդ երեկս ի 1 նոյեմբերի ճանապարհ է դուրս գալիս դէպի Փոթի և այնտեղից էլ ծովային ճանապարհով բաղձապատիկ նեղութեամբ, բայց անվտանգ հասնում է Կ. Պօլիս, միտքը դրած լինելով, համեմատ իւր Նախիջևանում կազմած մարշրուտին, այդ ճանապարհով ուղևորուել Եգիպտոս և այնտեղից էլ Սուէզով Հնդկաստան:

Թուրքիոյ մայրաքաղաքում Նալբանդեանցն այս անգամ մնում է մինչև դեկտեմբերի 21-ը և, ի հարկէ, այդ փոքրիկ ժամանակամիջոցն իզուր չի անցկացնում. նա, նախ ներկայանում է Ռուսաց դեսպանին և լսում նորա խորհուրդները, յետոյ տեսնում է Անգլիոյ դեսպան պ. Բուլլվերի հետ և խնդրում է նորանից տալ իրան մի «ճանօթարար թուղթ» Հնդկական կառավարութեան վերայ Կալկաթայում: Դեսպանը խորհուրդ է տալիս դեռ չուղևորուել Հնդկաստան, այլ առաջ երթալ Լոնդոն և երեսփոխանական ու արտաքին գործոց նախարարի Անգլիոյ տէրութեան գրած թղթերի հիման վերայ և այնտեղի Ռուսաց դեսպան պ. Բրուսնովի միջնորդութեամբ ամեն բան կարգի բերել այնտեղ և յետոյ արդէն մեկնել Հնդկաստան: Նալբանդեանցին թէև այդ խորհուրդը շատ էլ դուր չի գալիս. որովհետև դորանով ճանապարհն երկարում էր և գոր-

Ծը լետաձգուում, բայց նա նոյն գործի օգտի համար
ստիպուած է լինում ընդունել դեսպանի խրատները,
նա մանաւանդ որ Կովկասի իշխանութիւնն էլ այդպէս
էր խորհուրդ տուել անել նորան, Թուրքիոյ Ռուսաց
դեսպանն էլ այդպէս էր ասում:

Արդէն Փոթիից Կ. Պօլիս գնալու ժամանակ Նալ-
բանդեանցը փորձել էր ծովային ճանապարհորդութեան
համը, ենթարկուելով Սև ծովի աշնանավերջի զար-
հուրելի ալէկոծութիւններին և կրելով բազմադիմի նե-
ղութիւն ծովային հիւանդութեան երեսից: Այժմ, ա-
ւելի ուշ, ձմեռնամուտին, երբ Մարմառա, Նգէյեան
և Միջերկրական ծովերն այդ ժամանակներին յատուկ
ցրտաշունչ քամիներից անդադար ծփում, լեռնանում
և մի յորձանքից դէպի միւսն էին շարտում մեծամեծ
նաւերն անգամ, նա ենթարկուում է աւելի ևս մեծ
նեղութիւնների: Նա դեկտեմբերի 21 ին նաւ մտնելով
Ռսկեղջիւրի նաւահանգստում, միտքը դնում է ուղե-
ւորուել դէպի Մարսել, բայց ձմեռուայ մրրիկները մը-
ղում են շոգենաւը դէպի ուրիշ կողմը, և նա վեց օր
ու վեց գիշեր տատանուելով փրփրադէզ կոհակների
վերայ, ընկնում է, վերջապէս, Սիկիլիա: Համարեա թէ
փոթորկի տառապանքներից անշնչացած, նա միւս օրը
դուրս է գալիս Մեսսինայից մի ուրիշ նաւով, ու Մի-
ջերկրականի եզերքը քերելով, գնում էր դէպի Մար-
սել: Ծանապարհին նա մի առ ժամանակ հանգստանում
է Նապօլում, որտեղ նաւը խարխիս է ձգում բեռը
թողնելու և ուրիշն ընդունելու նպատակով, և լետոյ
երկու օր ևս մեծ նեղութեամբ շարունակելով իւր ճա-
նապարհը, հասնում է Ջանովա: Այդտեղից այլ ևս նա
չի կարողանում իւր բռնած ուղին շարունակել նաւով,
որովհետեւ տեսնում է, որ իւր առողջութիւնն իսպառ
քայքայւում է: Նա դուրս է գալիս ցամաք և երկա-
թուղիով հասնում է մինչև Ալպերի ստորոտը, որոնք
այդ ժամանակները ծածկուած էին ձիւնի հաստ շեր-
տերով: Թէև այդտեղ, սարերի վերայ, գուցէ, աւելի
մեծ վտանգ էր սպառնում նորա առողջութեան սաս-
տիկ սառնամանիքից, բայց նա լետ չի կանգնում իւր
գիտաւորութիւնից՝ շուտով հասնելու Լոնդոն. սահ-

նակ է վարձում և ենթարկուելով մեծ ցրտերի, անցնում է Ալպերը, իջնում է Փրանսիա և, վերջապէս, 1861 թուի Յունուարի 6-ին մտնում է Պարիզ։ Այդտեղ այս անգամ նա շատ չի մնում. մի չորս օր շունչ առնելուց ու հանգստանալուց լետոյ, կրկին ճանապարհ է դուրս գալիս և հասնում է իւր նպատակատեղին—Լոնդոն Վերեկն որ էր ^{11/23} Յունուարի»։

Անգլիոյ մայրաքաղաքում նախանշեանցը նախքան ձեռնարկելը գործին, երկու օր հանգստանում է ճանապարհի նեղութիւնից և ստանում է նամակներ, գրուած նախիջևանից և Պետերբուրգից Դեկտեմբերի 27-ից և Յունուարի 2-ից, որոնցից իմանում է, թէ մի քանի անբարոյական մարդիկ հռչակել են, որ իբրեւ թէ մի գոյութիւն չունեցող նամակ է բռնուել, իրանից նազարեանցին գրուած, և այն Յովնանեանի ձեռքով, և որ այդ նամակը 28 մարդու բողոքաբերով ուղարկուած է կաթուղիկոսին։ Ցաւում է նա իւր թշնամիների վերայ, որոնք իրան վնասելու համար, պարապում էին անձնախաբէութեամբ և զանազան պառաւական առասպելներ հռչակում էին իբրեւ իրողութիւն։ Նա Թիֆլիզից ոչինչ չէր գրել նազարեանին. միայն մի նամակ գրել էր նորան ս. Եղմիածնից, և այն էլ ուղարկել էր նորան Հայրապետեանի ձեռքով, որի պատասխանն էլ իւր ժամանակին ստացել էր։ Թէ այդ ինչ մտացածին նամակ էր, ո՞վ էր գորա գրողը և ո՞րք էին նորա վերայ բողոքողները հայրապետին և ինչի համար, — այդ նորան շատ չէր զբաղեցնում, որովհետեւ նա շատ լաւ էր ճանաչում իւր թշնամիներին և հասկանում էր, որ այդ միայն նոցա սրտի զայրութիւն էր, որ ստիպում էր նոցա պէս-պէս եղջերուաքաղութեամբ մխիթարուել։ Նորան նամանաւանդ զուարճացնում է այն հանգամանքը, որ ուրիշների նամակներն որսալու պաշտօնն իւր բարեկամների նամակների մէջ վերագրուում էր Յովնանեանցին, որին նա բոլորովին արժանի էր համարում այդպիսի «անպարծանք» գործին։ Նա բոլորովին հանգիստ էր իւր նամակների վերաբերմամբ, որովհետեւ շատ առաջ դեռ նախատեսել էր ամեն բան և այնպիսի իմաստութեամբ տնօրինել էր, որ նո-

քա միշտ անկորուստ հասնում էին իւրեանց նպատակին, «թողնելով թշնամիներին բերանաբաց մեկուսի»:

Յունուարի 13/25 ին նա ներկայանում է ռուսաց դեսպանին և իմանում է, որ բառոն Բրուկնովն արդէն ստացել է Գորչակովի թուղթը և գործի մասին հաղորդել է Անգլիոյ արտաքին գործոց նախարար պ. Ջոն-Ռոսլէին և խնդրել է որ նա կարգադրութիւն անէ՝ Նալբանդեանցին ճանաչելու Նախիջևանցւոց երեսփոխան հնդկական հրետակների վերաբերմամբ և այդ մասին իմաց տալ Հնդկաստանի կառավարութեան: Նախարարն էլ Անգլիոյ ներքին գերագոյն Տեսչութեան հետ գրադրութիւն ունենալուց յետոյ, պատասխանել է, թէ Տեսչութիւնը ճանաչում է Նալբանդեանցին լիազոր երեսփոխան հրետակների գործը վարելու համար և թէ այդ մասին էլ արդէն իմաց է տրուած Հնդկաստանի ընդհանրական նահանգապետին, որ նա ցոյց տալ նորան ամեն տեսակ ձեռնտուութիւն, եթէ նա, Նալբանդեանցը, դիմելու լինի նորան:

Այնուհետև Նալբանդեանցը Ռուսաց դեսպանատան խորհրդական կոմս Բլուդովի խորհրդով և դեսպանի թելագրութեամբ տանում է երեսփոխանական թուղթը Ռուսաց հիւպատոսարանը, որ հիւպատոսը ևս վկայէ, բայց հիւպատոսը պահանջում է, որ թուղթն ուղարկուի, նախ, անգլիական գլխաւոր ատենատեղերից մէկը, որ կոչուում էր «Յօռն-Օֆֆիս» և յետոյ արդէն հիւպատոսարան: Այդպէս էլ անում է Նալբանդեանցը և Foreign office-ը վաւերացնում է իւր ատենի կառավարչի ստորագրութեամբ և պետական կնքով, որով Նախիջևանից տրուած թուղթը ստանում է մի պաշտօնական վաւերականի զօրութիւն, ընդունուած և Անգլիական, և՛ Ռուսաց տէրութիւններից և պարտաւորեցուցիչ երկու տէրութեան պաշտօնեաների համար ևս:

Փետրուարի վերջերին Նալբանդեանցը թէև արդէն վերջացած է լինում բոլոր գործերը և հսնած բոլոր անհրաժեշտ թղթերը, ուրեմն, և պատրաստ է լինում ճանապարհ ընկնելու դէպի Հնդկաստան, բայց այլ ևս մի քանի ժամանակ, մօտաւորապէս մինչև մար-

տի կէս, աւելի կամ պակաս, դեռ մնում է Անգլիայում։ Հանգուցեալի իւր ձեռնարկած ճանապարհորդութիւնն այդպէս դանդաղեցնելու ու համարեա՞ միամտով լեռնաձգելու պատճառը լինում է ձմեռուայ ժամանակը և ծովային ուղեգնացութեան համար անբարելադող հոգմերի փչելը, որ կարող էր իսպառ քայքայել նորա առողջութիւնը։ Զայէտք է մոռանալ, որ նա Մարսէյից միայն Եգիպտոս հասնելու համար պիտի գործ դնէր 10 օր, Եգիպտոսից էլ Կալկաթա — 28 օր, ուրեմն, ընդամենը ծովի վերայ պիտի յղար 38 օր, և այդ բոլոր ժամանակն իւր կեանքը լանձնած պիտի լինէր մի ծովի խաղալիկ խղճուկ նաւի, կամ, ինչպէս ինքն ասում է, «ապաստան արարեալ գկեանս ի չնչին փայտն»։ Նալբանդեանցը կարծում էր, որ իրան ընտրողներն այդ փոքրիկ զանցառութեան համար չեն դատապարտել իրան, որովհետեւ հաւատում էր, որ ազգի համար իւր կեանքն էլ մի բան արժէր, եթէ ոչ ինքն ըստ ինքեան, գոնէ, այն գործի լաջողութեան համար, որին ձեռնարկել էր նա։ Նա մտածում էր այդ մի ամիս ժամանակն անցկացնել Լոնդոնից դուրս մի այնպիսի տեղ, որ և՛ օդի բարեխառնութիւն ունենար, և՛ կեանքի պիտոյքները համեմատական էժանութիւն։ Նա աշխատում էր, ըստ կարելւոյն, խնայող լինել, որովհետեւ թէեւ նորան ճանապարհածախս էին տուել 10 հազարի չափ մի գումար և բերելիք գումարներից խոստացել էին տալ 10 տոկոս, բայց նա չգիտէր, թէ որքան կտեի իւր ճանապարհորդութիւնը, որքան ծախս կպահանջէ դատաւարութիւնը և կեանքի ու ապրուստի ինչ պայմաններ կլինեն Լոնդոնում։

Թէ որքան ժամանակ է իսկապէս նա մնում Անգլիայում, դուրս է գալիս մայրաքաղաքից, թէ այնտեղ է մնում, ինչ է անում, ինչ գործով է զբաղուում նա այդ բոլոր ժամանակը և, վերջապէս, երբ է իսկապէս ճանապարհ դուրս գալիս — մեզ ճշտութեամբ յայտնի չէ, որովհետեւ մեր ձեռքը չի հասել նորա այն պաշտօնական նամակը, որ նա խոստացել էր գրել այդ մասին։ Մենք միայն գիտենք, որ նա շարունակաբար նամակներ էր ստանում իւր բարեկամներից և դոցա,

այդ նամակների միջոցով հետևում էր հայաբնակ կենդանիներում անցած դարձածին: Նա դեռ Լոնդոնում, ի միջի այլոց, տեղեկութիւն է ստանում իւր Նախիջևանի և Թէոդոսիայի բարեկամներից, որոնցից ոմանք պաշտօնական անձինք էին, թէ Քաբրիէլ վարդապետ Ալվազեանն Ասպահանում և Հնդկաստանի առաջնորդ Թադէոս արքեպիսկոպոս Բէկնազարեանի հետ ունեցած դրադրութիւնից յետոյ, Թէոդոսիայում հաստատել, կազմել է մի երեսփոխանութեան թուղթ, որի տակ ստորագրել են ինքը և մի քանի Թէոդոսացի Հայեր, և վաւերացնել է տուել այդ թուղթն ու ստորագրութիւնները Ղրիմի անգլիական հիւպատոսի ձեռքով: Թղթի նպատակն էր ձեռք բերել հրիտակները, որի համար երեսփոխան էր ընտրուել ու գնում էր ինքը Նալբանդեանցը: Թէ ում անունով էր հանուած այդ թուղթը և ում ձեռքումն էր այդ ժամանակ գտնուում, բարեկամները չէին յայտնում, բայց որ մի այդպիսի թուղթ գոյութիւն ունէր, այդ մի անելիքայելի փաստ էր: Թադէոս արքեպիսկոպոսը մի պաշտօնական գրութեամբ դիմել էր Ալվազեանին և խնդրել, որ նա ուղարկէ իրան մի թուղթ, իւր և Նախիջևանցի մի քանի մարդկանց ստորագրութեամբ վկայուած և անգլիական հիւպատոսի ձեռքով հաստատուած, որի մէջ պատուիրել էր գրել, թէ զգաւանդեալ կտակօք զհրիտակս ի Հնդկաստան, զամենայն լիով ստանալք, գործէ և տամք դայս թուղթ հաստատեալ մերով ձեռագրով: Բացի սորանից, յիշեալ արքեպիսկոպոսն իւր թղթի մէջ աւելացրել էր, թէ ինքն ունի յառաջ ասացեալ զհրիտակսն ստանալ յորոց ի ձեռս իցեն և ապա զթուղթն գայն տալ:

Այս յուրը չարաչար զայրացնում է Նալբանդեանցին. նա իսկոյնեւեթ գրում է Հայրապետեանցին, թէ ինքն իբրեւ պաշտօնական արձանագրութեամբ Նախիջևանցիներից հրիտակները ստանալու համար ընտրուած լիազօր երեսփոխան ստիպուած է բողոքել բոլոր նախիջևանցւոց առաջ ուրիշ, մասնաւոր մարդկանց գործի մէջ խառնուելու համար, որ կարող է ձեռնարկած գործի կանոնաւոր ընթացքը խանգարել և զանազան

անհամութիւնները պատճառ լինել. նա հրաւիրում է քաղաքագլխին շտապել այդ բոլորի առաջն առնել և, նամանաւանդ, չթողնել, որ Ալվազեանը Թադէոս արքեպիսկոպոսի խնդրած թուղթն ուղարկէ: Իսկ եթէ իբրեւ պաշտօնական անձն քաղաքագլուխը լուէ և այդ լուութիւնից առաջ գալ, կամ մի որևէ վնաս հասնի ազգին, ինքն անպարտ է համարում իրան և բոլոր բարոյական պատասխանատուութիւնը գալոց սերնդի առաջ թողնում է քաղաքագլխի և նախնականացիների վերայ, որոնք թող տո՛ւած կլինեն դորանով մի քանի մարդկանց ազգից ծածուկ տիրանալու նորա սեփականութեան:

Ինչ էր պատահել և որքան ճիշտ էր այն լուրը որ հաղորդել էին Լոնդոն Նալբանդեանցին նորա բարեկամները: Որ հրիտակները ստանալու համար գրագրութիւն կար Ս. Էջմիածնի սիւնհոգոսի և Պարսկաստանի ու Հնդկաստանի առաջնորդ Թադէոս արքեպիսկոպոսի մէջ և այդ վերջինի ու Գաբրիէլ վարդապետ Ալվազեանի մէջ,—այդ մի նոր բան չէր: Այդ գրագրութիւնը սկսուել էր 1858 թուին և շարունակուել էր 59-ին, և այդ բանի մասին ամենքը տեղեկութիւն ունէին. նամանաւանդ ինքը Նալբանդեանցը, որ մի քանի ամիս առաջ եղել էր Ս. Էջմիածնում և, անկասկած, ամեն բանի էլ մանրամասնաբար ծանօթացել էր այնտեղ: Այդ բոլորի մէջ նորը միայն այն էր, որ հէնց վերոյիշեալ գրագրութեան հիման վերայ Ալվազեանն ուղարկել էր Թադէոս արքեպիսկոպոսին մի կտրողագիր իւր ստորագրութեամբ և մի քանի պատուաւոր թէոդոսացիք և տեղական անգլիական հիւպատոսը վկայել, վաւերացրել էին նորա ստորագրութեան ճշտութիւնը, իսկութիւնը: Սակայն հաղորդուած լուրի նորութիւնն էլ լիակատար չէր գրուած Նալբանդեանցին. կարողագիրը կազմուած և ուղարկուած էր Ասպահանու առաջնորդին ոչ ընդհանրապէս բոլոր հրիտակները ստանալու համար, այլ միայն և միայն Կոտարինէ Խօջամալեանի կտակի համար, որի մասին գլխաւորապէս և խօսք ու զրոյց էր լինում լիշեալ գրագրութեան մէջ:

Թէև Նալբանդեանցն իրաւունք չունէր մասնաւոր անձինք համարելու Ս. Էջմիածնի սիւնհոգոսը, Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդին և Նոր-Նախիջևանի ու Բեսարաբիոյ թեմի առաջնորդութեան տեղապահին, որովհետև դոցանից իւրաքանչիւրը կտակների զօրութեամբ լարակցութիւն ունէր գործի հետ, յայնա տեղիք ունէր բարկանալու և բողոքելու: Քանի որ Նալբանդեանցը Նախիջևանցիներից լատկապէս հէնց հրիտակների համար ընտրուած էր երեսփոխան և քանի որ նա հաստատուած էր Վեհափառ կաթողիկոսից ու ճանաչուած Ռուսաց և Անգլիական տէրութիւններից և արդէն իսկ ձեռնարկել էր գործին, որ չէր կարող չիմանալ Այվազեանը, հարկաւորութիւն կ'որ ալ ևս շարունակելու գրագրութիւնը և կարողագիր ևս կազմելու և ուղարկելու Պարսկաստան կտակներից մէկը ստանալու համար: Սրբազան Թադէոս արքեպիսկոպոսի գրագրութիւնը հրիտակների մասին եղել էր 58 թուին, Ս. Էջմիածնի սիւնհոգոսն էլ հրամայել էր Այվազեանին կատարել արքեպիսկոպոսի խնդիրքը և ուղարկել նորա ցանկացած թղթերը 59 թուին, երբ դեռ չէր եղել Նախիջևանի ժողովը և Նալբանդեանցն էլ երեսփոխան չէր ընտրուել, չէր գնացել Ս. Էջմիածին և հաստատուել Վեհափառից: Թադէոս արքեպիսկոպոսին ներելի էր այնքան հեռաւոր տեղից, ինչպիսին Նոր-Ջուղան էր, վերահասու չլինել 60 թուի ամառուայ ու աշնան ամիսներին Նախիջևանում և Ս. Էջմիածնում կատարուած գործողութիւններին, տեղի ունեցած հանգամանքներին, բայց Այվազեանին... Դորա մեղքը հէնց այն բանի մէջ է, որ նա բանի տեղ չի դնում իւր քթի տակ եղածը, կատարուածը, կամաւ անգիտանում է. նա փոխանակ դադարեցնելու բոլոր գործողութիւնները կտակների վերաբերմամբ, փոխանակ վերջացնելու գրագրութիւնները և Պարսկաստանի առաջնորդին գրելու գործի բոլոր հանգամանքները և յորդորելու ձեռնպահ մնալու, դեռ մի կարողագիր էլ է կազմել տալիս և ուղարկում Պարսկաստան:

Նալբանդեանցն իրաւացի չէր, երբ ականարկելով Այվազեանի և Թադէոս սրբազանի վերայ,

գրում էր, թէ մի քանի մարդիկ ազգից ծածուկ կամենում են տիրանալ ազգի սեփականութեան, որովհետեւ կտակները մէջ ճշտիւ որոշուած էին փողերի նպատակները և այն հաստատութիւնները, որոնց պէտք է լատկացնուէին նոքա, ուստի և ուրիշ բանի վերայ, ուրիշ նպատակի համար չէին կարող գործ ածուել ստացուած փողերը. բայց նա շատ իրաւացի էր, երբ գրում էր, թէ Ալվազեանի և միւսների պարակաւնոն գործողութիւնները կարող են մի կողմից խանգարել ձեռնարկած գործի կանոնաւոր ընթացքը, միւս կողմից էլ նւթականապէս և բարոյապէս վնասել ազգի շահերին: Թողնելով իւր տեղում ցոյց տալու, թէ ինչ վնաս կրեց ազգն ուղարկած կարողագրի պատճառով, մենք այստեղ միայն կշշտենք երկու կէտի վերայ, որոնք իբրեւ բնական հետեանք եղած անկանոն գործողութիւնների իսկոյն աչքի են ընկնում: — Ինչ պիտի ասէր Հնդկաստանի անգլիական կառավարութիւնը, երբ միւսոյն կտակի համար նորան ներկայացնէին երկու կարողագիր. ինչ պիտի ասէր և կտակակատարը, երբ նորանից միւսնոյն կտակի գումարն երկու հոգի պահանջէին:

ՆՐՈՒԱՆԴ ԵԱՀԱԶԻՋ

(Կը շարունակուի)